

ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՆ ՄԵԿԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բաճաթիւ. գիտ. դպրոցի ԱԼ. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ

1. ԱՐԱՎՈՒՍ

Ինչպէս ասարեք անձինք կարող են կրել նույն անունը, այնպէս էլ տար-
րիւր տեղանուններ կան, որոնք միանման են: Այդպիսի տեղանուններից է
և ԱՐԱՎՈՒՍ-ը, որպիսի անվամբ գյուղ է գոյութիւն ունեցել կամ այսօր
գոյութիւն ունի Հայաստանի Հանրապետության Սիսիանի, Գորիսի շրջան-
ներում, ինչպէս նաև Արցախում¹: Դա, անշուշտ, բոլոր դեպքերում նույն
անունն է, որի ծագումը, սակայն, դեռևս հայտնի չէ:

Գորիսի շրջանի Տեղ գյուղից 2 կմ հյուսիս-արևմուտք գտնվող Արավուս
գյուղի² անունը պատմաբան Մորուս Հասրաթյանը հանում է Սյունյաց աշ-
խարհի Աղահեճ գավառի Արահեճ³ գյուղի անունից՝ առանց հիմնավորելու
դրանից նման ձևի առաջացման հնարավորութիւնը⁴: Այնպէս որ, առանց
սխալվելու կարելի է ասել, որ դեռևս մութ է մնում Արավուս տեղանվան ծա-
գումը, որը և բնականաբար ու ամենից առաջ պահանջում է պարզել, թե
այն նախապէս ինչպե՞ս է գործածվել անցյալի զրավոր աղբյուրներում,
որոնք առհասարակ մեծ արժեք ու կարևորութիւն են ներկայացնում ստու-
յարանութիւնների համար:

Առաջնորդվելով այդ պահանջով՝ տեսնում ենք, որ Արավուս գյուղա-
նունը առաջին անգամ հանդիպում է հայերեն ձեռագրերի՝ 1471 և 1487 թթ.
գրված հիշատակարաններում՝ Արեւիս ու Արեւիս ձեռնով: Հմմտ. ա) «Փառք
ամենասուրբ երրորդութեան, որ ետ կարողութիւն մատնգէտ և իփշուն (՞)
դրչի Դրիգորի, որ աւարտեցաք զառատաբուխ շնորհս ողորմութեան՝ սուրբ
Անտարանս փրկչական: Թվականութեանս Հայոց ԹՃԻ. (1471), երկիրս
Սիւնեաց, գեղս որ կոչի Արեւիս, ընդ հովանեաւ սուրբ Դրիգորիս»⁵ և բ) «Գրե-
ցաւ սուրբ Անտարանս ի գաւառիս Սիւնեաց, ի գեաւղս որ կոչի Արեւիս,
առ ոտս սուրբ Դրիգորիս, առաջնորդութեամբ Յովնաթան վարդապետի, ձե-
ռամբ ոգնամեղ դրչիս»⁶:

Այստեղ, անշուշտ, նկատի է առնվում ոչ թե Գորիսի, այլ Սիսիանի
շրջանի Արավուս գյուղը, որի՝ իրարից զրեթե շտաբերվող Արեւիս և Արեւիս
անվանաձևերը աղբյուրակցվում են Տաթևի վանքին տրվող հարկի հին ցու-
ցակում Մղուկ գավառի համար հիշատակվող Արեւս (<Արեւիս) գյուղան-
վանը⁷ և հաստատում, որ դա է եղել բուն նախաձևը:

¹ Այդ մասին տե՛ս, օրինակ, Թ. Խ. Հակոբյան և ուրիշ. Հայաստանի և հարակից
շրջանների տեղանունների բառարան. հ. 1, Երևան, 1986, էջ 393—394:

² Տե՛ս Ա. Ա. Ասլանյան, Հ. Ղ. Գրգեարյան, Հայկական ՍՍՀ աշխարհագրա-
կան անունների համառոտ բառարան. Երևան, 1981, էջ 29:

³ Ստ. Օրբելյան. Պատմութիւն նահանգին Սիսական. Փարիզ, 1859, էջ 260:

⁴ Մ. Հասրաթյան. Պատմա-հնագիտական ուսումնասիրութիւններ. Երևան, 1985,
էջ 156:

⁵ ԺԺ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. մասն Բ, Երևան, 1958, էջ 316:

⁶ Նույն տեղում, մասն Գ, Երևան, 1967, էջ 97:

⁷ Ստ. Օրբելյան. Պատմութիւն նահանգին Սիսական. Փարիզ, 1859, էջ 260, և ԹԻՖ-
լիս, 1910, էջ 510:

Գալով Գորիսի շրջանի Արավուս գյուղանվանը, պետք է ասել, որ դա էլ առաջին անգամ հիշատակվում է Տաթևի վանքին արվող հարկի նոր ցուցակում՝ Զանգեզուր գավառի համար նշված գյուղերի (Կորէսն, Հուանիաւ-րայ, Փարահունչն, Ալիդուլուէն, Խնձորէքսն, Գորու, Փարաշէն, Տեղ, Շըն-հեր, Խոտ, Հալիձոր) շարքում՝ Արաւիս ձևով⁸, Ի գեպ, այդ գյուղը այդ ձևով են հիշատակում նաև Ղ. Ալիշանը⁹ և Ս. Էփրեկյանը¹⁰:

Անկախ, սակայն, այն բանից, թե որ գյուղերն են Արավուս անունը կրում, պետք է ասել, որ հնուց ավանդված Արեխ ($>$ Արէէս) — Արեխո — Արավիս ձևերը շատ պարզորոշ ուղղագծում են նրա առաջացման ընթացքը և ցույց տալիս, որ իսկապես նախահիմք է հանդիսացել Արեխո-ը, որն էլ իր հերթին այլ բան չէ, քան ժամանակին լայնորեն գործածված Արեխ տեղանվան (հիշենք, որ Սյունիքի գավառներից մեկն այդպես էլ կոչվել է) հայցական հոլովածու, հմմտ., օրինակ, Մասիք — Մասիւ, Ագուլիք — Ագուլիս, Բնունիք — Բնունիս, Գորայք — Գորայս — Գորիս, Վարդենիք — Վարդենիս, Տոլորք — Տոլորս, Հարժիք — Հարժիս, Եղեգիք — Եղեգիս և այլն:

Սերելով Արեխի (Արեւիք) տեղանվան հայցականից՝ Արեխ նախաձևը, ինչպես դժվար չէ նկատել, անփոփոխ չի մնացել և ժողովրդի բերանում ձայնավորների ներդաշնակության օրենքով դարձել է Արավուս: Իսկ սա միաժամանակ ցույց է տալիս, որ մի շարք տեղերի (գավառների, լեռների, գյուղերի և այլն) անունների պես այդ գյուղանունը ևս կապվում է երկնային լուսատու արևի հետ (հմմտ. Արեւք $<$ Արեւեք, Արեւիկ $<$ Արեւիկ, այլև՝ Արեգիկ, Արեգի, Արեգունի, Արեւաշառ...) և իբրև ածանցավոր (Արեւիք $\rightarrow$ Արեւիս) բառ՝ իր կազմության համապատասխան արևոտ տեղ իմաստն է արտահայտել: Ավելացնենք, որ Գորիսի շրջանի Արավուս գյուղը իր դիրքով ու տեղանքով ճիշտ այդ նույնն է հաստատում:

2. ԽՆՁՈՐԵՍԿ

Հայաստանի Հանրապետության Գորիսի շրջանի Խնձորեսկ գյուղը, որ նախկին տեղից՝ խոր ձորերից տեղափոխվել է դրանցից վեր՝ ձախ կողմում ընկած սարահարթը¹¹, Սյունյաց աշխարհի Հարանդ գավառի հնագույն գյուղերից մեկն է եղել և, անվիճելիորեն, շատ երկար դարերի պատմություն ունի:

Այն առաջին անգամ հիշատակվում է XIII դարի նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանի «Պատմութիւն նահանգին Սիսական» գրքի՝ Տաթևի վանքին արվող հարկի հին ցուցակում Հարանդ գավառի համար նշված 59 գյուղերի շարքում՝ 10 միավոր հարկաչափով:

Տվյալ դեպքում, սակայն, մեզ ոչ թե դա, այլ հնագույն գյուղի անվան ծագումն է հետաքրքրում. ինչից, ինչպե՞ս է առաջ եկել Խնձորեսկ գյուղանունը և ի՞նչ է նշանակում:

Մենք, ինչպես հայտնի է, տակավին հայոց տեղանունների լեզվաբանական-ստուգաբանական, նրանց գործածությունները վավերական-քննադատելի օրինակներով ցուցաբերող բառարան չունենք, և առաջին հերթին հենց այդ պատճառով շատ ու շատ տեղանունների ծագումն ու կազմությունը դժբախտաբար մութ, չբացահայտված են մնում:

Այդպիսի տեղանուններից է նաև Խնձորեսկ գյուղանվանումը, որի ծագման մասին էլ այն կարծիքն է հայտնվել, թե ձևով ժողովրդական ստուգա-

⁸ Ժամանակագրութիւն Սահմաննոսի Օրբէլեանի. Երևան, 1942, էջ 42 (այդտեղ նման ձևով է նշված նաև Սիսիանի գավառի մեջ մտնող Արաւիս գյուղը):

⁹ Ղ. Ալիշան. Սիսական, Վենետիկ, 1893, էջ 264:

¹⁰ Ս. Էփրեկյան. Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան. Վենետիկ, 1902, էջ 280:

¹¹ Տե՛ս Հայկական սովետական հանրագիտարան, հ. 5, Երևան, 1979, էջ 62:

բանություն, խնամքով անվան արմատը «խնամք» բառն է: Մեկ այլ ստուգաբանությամբ՝ խնամքն անվանվել է խնամք կամ խնամքով, որը հետագայում որոշ հնչյունափոխության ենթարկվելով՝ ընդունել է ներկայիս ձևը¹²:

Թվում է, թե խնամքն գյուղանունը իր ավելի հիմնավոր ստուգաբանական մեկնությունը պետք է գտնել «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարանում»¹³, բայց իրականում այդտեղ նման չնչին փորձ չի արվել, և վերևում ասվածն էլ պարզապես ներկայացվել է ալյապես. «Խնամքն անունը ստուգաբանվում է որպես «խնամք», «ես» (") և ստ ավանդության՝ խոր ձորերի մեջ կառուցված լինելու պատճառով, նախապես անվանվել է խոր ձոր կամ խորանք և հետագա ձևափոխությամբ դառել է (=գարձել է—Ա. Մ.) խնամք»¹⁴:

Այսպիսով, խնամքն գյուղանունը դեռևս ճշտորեն չի ստուգաբանվել, և հայտնի է, թե իրական ինչից է ծագում: Իսկ զա բոլորովին էլ պատահական չպետք է համարել, որովհետև գյուղանվան ծագման հարցը երբեք հատուկ քննության չի արժանացել, և որևէ մեկը իր առջև խնդիր չի գրել պարզելու, թե խնամքն գյուղանունը գրավոր աղբյուրներում նախապես և հետագայում ինչպիսի ձևերով է գործածվել, թե նրա նախավոր ձևը ժամանակի ընթացքում ինչպիսի ձևափոխություններ է կրել, և վերջապես՝ ինչպես է առաջ եկել այսօրվա խնամքն:

Տեղանունները, — իրավացիորեն նշում է մեծանուն Հր. Աճառյանը, — ավելի հարատև և տևական բնույթ ունեն, քան անձնանունները: Որևէ լեռ, լիճ, ծով ու գետ մշտնջենական կյանք ունի. հետևաբար և նրանց սնունդը ընդհանրապես մնայուն է և տևական (ընդգծումն իմն է—Ա. Մ.)¹⁵:

Խնամքն գյուղանվան՝ հին գրավոր աղբյուրներում անվանված ձևերը հավաստելով ասվածի ճշտությունը՝ ցույց են տալիս, որ «բնիշխանության մնայուն և տևական» մնալով՝ այն միաժամանակ կրել է և որոշ ձևափոխություններ:

Խնամքն գյուղանունը հին ձևագիր աղբյուրներում հանդիպում է բացառապես խնամքն ևս: Դա ազպես է ներկայացված Սո. Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» գրքի՝ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող գրքի բոլոր՝ № 6271 (XIV դար, էջ 335 ա), № 2869 (1846 թ., էջ 325), № 2868 (1854 թ., էջ 269), № 2924 (1864 թ., էջ 151), № 5501 (1864 թ., էջ 342) ձևագրերում, և միայն մեկ՝ № 1488 ձևագիր (1781 թ., էջ 211) խնամքն ևս փոխարեն ունի խնամքն ևս, որը զրիչը ալյապես՝ առանց կ-ի է գրել վերապատմաբար:

Այսպիսով, անփոփոխ է, որ խնամքն գյուղանունը իրոք նախապես միայն խնամքն է և ունեցել, որը և բոլոր դեպքերում ու պարտադրաբար պետք է հիմք ընդունել նրա ծագումը պարզելու համար: Առաջնորդվելով այդ ուղենշով, տեսնում ենք, որ խնամքն գյուղանվան նախավոր ձևը այնուհետև հանդիպում է համեմատաբար նույնպես ավելի վաղ շրջանի մի քանի գրավոր աղբյուրներում՝ երեք՝ խնամքն, խնամքն և խնամքն ևս:

1654 թ. գրված մի հիշատակարանում և Աբրահամ կաթողիկոս Կրկ-տացու «Պատմագրություն անցիցն իւրոց և նատր-Շահին Պարսից» գրքում այն ներկայացվում է առաջին՝ խնամքն տեսքով, ինչպես՝ «Արդ՝ գրեցաւ սբ. Աւետարանս ձեռամբ Մարտիրոս Կղերիկոսի, որ էր նա յերկրէն Մազազն»:

¹² Նույն տեղում:

¹³ Բ. Խ. Հակոբյան, Սո. Ս. Մեկի ք-Քախ շյան, Հ. Խ. Բարսեղյան, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. 2, Երևան, 1988, էջ 748:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Հր. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Երևան, 1962, էջ 344:

րոյ, ի դեղջէն խնծորեկոյ»¹⁶, «...նախ կային ԵՃ (500) տուն ի խնծորեկ դեղն, բայց այժմ սակաւացեալք էին զի բազումք սպանեալք էին ի թուրքաց»¹⁷, «Վասն որոյ աճապարեցի և եկի ի դիւղն ի Ձորգեղն և անտի ի Պնածոր գիւղ, անախ ի Ղօռչիպէկի օպայն, որ էր փիսիանացի. և անախ ի խնծորեկ, որ է ի մէջ քարածեռ լեռանց մեծամեծաց, և ունի անբաւ բարձրութիւն...»¹⁸,

Խնծորեկ գյուղի նախնական խնծորեկ անվանումը, ի տարբերութիւն դրա, Երկրորդ՝ խնծորեկսն ձևով ներկայացվում է Տաթևի վանքին տրվող հարկի նոր ցուցակում¹⁹ (դրված 1730 թ.), իսկ խնծորեկ ձևով՝ Սա. Շահումյանի «Հնտիր պատմութիւն Դաւիթ Բէգին» գրքում, ինչպես՝ «Եւ զաւար բազում յոյժ առեալ ի նոցանէ զհարիւր վաթսուն բեռնս ուղտուց, և անտի շուեալ երթայր ժամանակ ինչ ի մեծ բերդն խնծորեկս բնակէր»²⁰, «զի նա յօրէ յորմէ հետէ ի խնծորեկս բնակէր...»²¹,

նույն այդ երեք ձևերն էլ ակնհերե դարձնելով նախնական խնծորեկ ձևի իսկութիւնը՝ պարզորոշ ուրվագծում են նաև նրա հետագա փոփոխութեան ընթացքը, որ լիովին հիմնավորվում ու հաստատվում է հնչյունաբանորեն. հայերենին հատուկ օրենքներով երբեմնի եա երկբարբառը հնչյունափոխվելով՝ տվել է ե, ինչպես, ասենք, համանման կազմութիւն ունեցող այգեկ (<այգեակ<այդի+ակ>), գտեկ (<գոտեակ<գոտի+ակ>), հմայեկ (<հմայեակ>) բառերում²², Հմմտ. նաև՝ աղաւնի—աղաւնեակ—աղավնյակ, կղզի—կղզեակ—կղզյակ, ուղի—որդեակ—որդյակ, լուսին—լուսնեակ—լուսնյակ, տասն—տասնեակ—տասնյակ և այլն:

Այսպիսով, միանգամայն պարզ է, որ նախնական խնծորեկ անվանաձևին անմիջապես հաջորդող անվանաձևը խնծորեկ-ն է, որում եա > ե հնչյունափոխութիւնից բացի նաև ձայնեղ հնչյունի (ծ > ծ) խլացում է տեղի ունեցել:

Հետագայում դրան ավելացել է նույնպես լեզվաբանորեն արդարացիորէրկու նոր փոփոխութիւն. խնծորեկ-ը նախ արտասանվել-դարձել է խնծորեկս, ապա՝ Բ, և հնչյունների դրափոխութեամբ՝ խնծորեկս, որի հիման վրա էլ, անշուշտ, ուշ ժամանակներում առաջ է եկել ներկայիս խնծորեկ անվանաձևը, որ Ստ. Օրբելյանի Պատմութեան առանձին ձեռագրերում գործածվել է նախնական խնծորեկ անվան փոխարեն և այդպես էլ արտացոլվել նրա փարիզյան (1859, էջ 267) և թիֆլիսյան (1910, էջ 516) հրատարակութիւններում:

Պատկերը, սակայն, այլ է Սա. Օրբելյանի Պատմութեան մոսկովյան հրատարակութիւնում²³. այդտեղ, որ, իհարկե, կարևոր է, գյուղանունը գործածվել է իր նախնական խնծորեկ և ընթերցվածային խնծորեկ ձևով, որը և մի անգամ ևս ու իր հերթին առաջինի նախավորութիւնը և երկրորդի նորագոյացութիւնն է հաստատում:

Շատ ավելի պարզորոշ այդ նույնն են հաստատում նաև խնծորեկ գյուղանվան բարբառային ձևերը: Գորիսի բարբառում խնծորեկ գյուղանունը մեծ մասամբ գործածվում է նախնական խնծորեկ (>խնծորյակ)-ից սերող ձևերով, ինչպես, օրինակ՝ Խնծորեկիցի (ԵՇօն լեակօղ խոնձորեկէ-

¹⁶ Հայերեն ձևագրերի հիշատակարաններ, Ժէ դար. հ. Գ, Երևան, 1984, էջ 601:

¹⁷ Աբրահամ կաթողիկոսի Կրօնացւոյ Պատմագրութիւն անցիցն իւրոց և նադր-չահին Պարսից. Վաղարշապատ, 1870, էջ 74—75:

¹⁸ Նույն տեղում, էջ 74:

¹⁹ Ժամանակագրութիւն Ստեփաննոսի Օրբելեանի. Երևան, 1942, էջ 42, այլև՝ ՄՄ, ձեռ. № 6271, էջ 339 ա:

²⁰ Ստ. Շահումյան. Հնտիր պատմութիւն Դաւիթ Բէգին. Վաղարշապատ, 1871, էջ 71:

²¹ Նույն տեղում:

²² Այդ մասին տե՛ս Մ. Արեղյան. Հայոց լեզվի տեսություն. Երևան, 1965:

²³ Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի Պատմութիւն Տանն Սիսական. Մոսկով, 1861, էջ 375:

յի»)—խոնձորիկեցիք (ախոնձորիկեցիք խելաւք մարթիք էն»), Խոնձորեկու (ախոնձորեկու ժողովուրդը սըրախօս տա), Խոնձորեկաւ (ախոնձորեկաւ մէր շէնը հէոս չի»), Խոնձորեկում (ախոնձորեկում լծվ իրպիւրէք կան»—«խնձորեկում լավ աղբուրներ կան») և այլն:

Այս և բերված մյուս բոլոր փաստերը պարզորոշ ցույց են տալիս, որ ներկայումս զործածվող Խնձորեկ գյուղանունը ծագում է իրոք Խնձորեկ (> Խձորյակ) նախաձևից, որն էլ պարզապես ածանցավոր բառ է՝ կաղմը-ված Խնձորի (< Խնձոր+ի) ծառանունից և ալ փոքրացուցիչ-փաղաքշական նշանակություն արտահայտող ածանցից:

Գյուղի այդ անվանումը և դրա աղբյուրի կազմությունը լիովին պատճառաբանվում ու հաստատվում են ինչպես իմաստաբանորեն ու տրամաբանորեն, այնպես էլ լեզվաբանորեն ու հնչյունաբանորեն: Հակառակ դրան, ոչնչով չի հիմնավորվում և հետևաբար՝ մերժելի է այն ստուգաբանությունը, որով Խնձորեկ-ը կապվում է Խոռ ձոր(եր)ի հետ և դրա հնչյունական ձևափոխությունն է համարվում: Գործիս բարբառում եթե Խոռ բառը ուղիղ ձևերում չի փոխվում և աճելու դեպքում Խուր է դառնում, ապա ձոր բառը զգալի փոփոխություն է կրում և ծծլ կամ ծուր է հնչվում, հմմտ. օրինակ՝ Խոռ խորանաս սոնք—«Խոր խորանաս դոս», ԸՍՐ (< ձոր)—ԸՍՐէր (< ձոր+ի), ԺՕՐձվը (< ձորովը), Ժուրէրումը (< ձորերումը), ԸռչածՕր (< տրջածոր) և այլն²⁴:

Խնձորեկ գյուղանունը ձոր բաղադրիչ ունենալու դեպքում պետք է արտաբերվեր դրան համապատասխան, մինչդեռ գործածվում է այնպիսի ձևերով, որոնք բացառապես Խնձոր, Խնձորի բառերին են հատուկ, հմմտ. օրինակ, Խնձոր-խոռածոր || ԽինձՕր || Խոռնձոր. Խնձորի-խինձՕրի || ԽընձՕրի || ԽոռնձՕրի. Խնձորեն-խինձուրէն || Խոռնձուրէն. Խնձորեն-խինձՕրէք || ԽոռնձՕրէք և Խնձորիկեցի-խինձուրիկեցի, || Խոնձուրիկեցի-Խնձորիկեցիք- Խինձուրիկեցիք || Խոնձուր- Էէցիք և այլն:

Սրանք փաստեր են, որոնք վկայում են այն մասին, որ անցյալում մի շարք գյուղերի կոչվել են ծառերի, բույսերի, պտուղների և կամ դրանց հետ կապվող, դրանց վերաբերող անուններով, ինչպես, օրինակ՝ Մորենի, Յողուհի, Եղեգնաձոր, Փշատիք, Վարդենիք, Խնձորուտ, Կեչուտ, Ուռիք, Տանձուտ, Քեղաձոր, Մշենի, Մարգի, Տանձյակ, Խոտ, Մարգաձոր, Տանձավայր, Ճապկուտ, Թեղյակ և այլն²⁵:

Պետք է ասել, որ գյուղանվանումների այս խմբին է պատկանում նաև Խնձորեկ (> Խնձորեկ > Խնձորեկ) գյուղանունը, որը կազմվելով Խնձորի (= Խնձորենի) ծառանունից և -ակ վերջածանցից՝ փոքրացուցիչ-փաղաքշական իմաստի հետ մեկտեղ, անշուշտ, նաև Խնձորի ծառերի՝ Խնձորենիների տեղ է նշանակել:

Ըստ էության այդ է հաստատում նաև Ղ. Ալիշանը, երբ ասում է, թե «Զարդիս (իմա՝ այժմ, ներկայումս—Ա. Մ.)՝ Խնձորեկ կոչի և Խնձրխտան (իմա՝ Խնձորի ծառի տեղ—Ա. Մ.), և ունի 610 երգս Հայոց»²⁶:

Առաջ գնալով նշենք, որ Տաթևի վանքին տրվող հարկի հին ցուցակում Ստ. Օրբելյանի հիշատակած 677 գյուղանուններից նույն եղանակով ու նշանակությամբ են կազմված նաև Տանձյակ (< Տանձեակ < տանձի+ակ), Թեոյակ (< Թեղեակ < Թեղի+ակ), Մայրյակ (< Մայրեակ < մայրի+ակ), Սնձըն-

²⁴ Խ-ի, Ձ-ի և Խոռ, ձոր բառերի հնչյունական փոփոխությունների մասին տե՛ս մեր «Գործիս բարբառը» (Երևան, 1975, էջ 100, 79—80, 333, 345):

²⁵ Այդ գյուղանունները բերվում են Սյունիքի տառերեկու գավառների եկեղեցու այն հարկացուցակից, որ ներկայացրել է Ստ. Օրբելյանը իր Պատմության մեջ:

²⁶ Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 263:

յակ (<Սնծնեակ<սնծնի<սնծնի+ակ)²⁷ դյուղանունները Հմմտ. նաև Հս-յնյակ<Հայկելեակ, որ, սակայն, կազմված է ոչ թե ծառանունից այլ հայելի բառից՝ «ակ վերջածանցով, և, անշուշտ, հայելու՝ նայելու տեղ է նշանակել: Սրանք իրենց հերթին ևս եթե մի կողմից հեծոռեակ> հեծոռյակ նախավոր ձևի, ապա մյուս կողմից՝ դրանից հենց հեծոռեակ գյուղանվան ծագումն են ապացուցում, լիակատար իրավունք տալով մեզ՝ այն դասելու ստուգարանված տեղանունների շարքը:

3. ԽՈՋՆԱՎԱՐ

Սյունյաց աշխարհի նախկին Քաջաթաղ գավառի և ներկայիս՝ Հայաստանի Հանրապետության Գորիսի շրջանի Խոջնավաղ գյուղը հայոց հնագույն գյուղերից է և ունի նույնպես դարավոր պատմություն: Նրա մասին առաջին գրավոր տեղեկությունը մենք տեսնում ենք երկու հիշատակարանում՝ գրված մեկը 1488, իսկ մյուսը՝ 1490 թ.:

Երկու հիշատակարանի հեղինակը նույն անձն է՝ Շապանի որդի զրիշ Ծղիւն, որը և դյուղանունը գործածել է նախ՝ Խոջնավաղ և ապա՝ Խոջնավաղ գավառի Հմմտ. ա) «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականութեանս հայկազան տումարի ԶԼԷ. (1488), ի հայրապետութեան տեառն Սարգսի, ի յաթոռակալութեան Սիւնեաց Որդանան վարդապետի, և աշխարհականութեանս (իւնա՝ «յաշխարհակալութեանս») Նաղուպի՝ յարիւնարբու բռնաւորի, որ ախրեաց բաղում յաշխարհի և գաւառի բռնութեամբ և իւրովի կամաւք մինչև Խոջնավաղ տիրեալ:

Եւ գրեցաւ ի գաւառիս Քաջթաղուց, ի գէղս որ կոչի Խոջնավաղ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի նախավկայիս և այլ բազմահաւաք սրբոց, որ աստ կան հաւաքեալս»²⁸ և բ) «Արդ, գրեցաւ սուրբ յԱւետարանս ի թվականիս (1490), ի գաւառիս Քաջթաղուց, ի գեղոյս որ կոչի Խոջնավաղ, ընդ հովանեաւ սուրբ Ստեփանոսի նախավկայիս և այլ բազմահաւաք սրբոցս, որ աստ կան հաւաքեալս...»²⁹: Այսպիսով, գյուղանվան երկու ձևերն իրարից տարբերվում են աննշան՝ սոսկ լ-ի և վ-ի գրություններ, որոնցից ճիշտն էլ, անշուշտ, վերջինն է:

Ինչպես հայտնի է, և և վ հնչյունների գրությունները ժամանակի ընթացքում նախադիվ են և հաճախ, մանավանդ միջին դարերում, գործածվել մեկը մյուսի փոխարեն: Ահմեդ է, որ նման դրախտատում է տեղի ունեցել նաև այս դեպքում, և որն էլ իր հերթին ցույց է տալիս, որ գյուղի նախնական կամ նախավոր ձևը Խոջնավաղ է եղել: Միանգամայն հասկանալի ու տրամաբանական է, որ այստեղ էլ դա՝ պետք է հիմնական ծառայի գյուղանվան ստուգարանության համար:

Դժբախտաբար, սակայն, ոչ ոք փորձ չի արել նույն այդ հիմքի վրա քննելու և պարզելու Խոջնավաղ անվան ծագումը:

Պատմաբան Մ. Հասրաթյանը բավարարվել է՝ մատնանշելով գյուղանվան նախնական Խոջնավաղ ձևը³⁰, իսկ ուրիշները սոսկ ենթադրություններ են արել և հավանական համարել, օրինակ, «խոջան» ու «վար» բառերից նրա ծագումը³¹:

27 Այդ գյուղանունը Ստ. Օրբելյանի Պատմության և նրա գրքի բոլոր ձեռագրերում (№ 6271, № 2869, № 2868, № 2924...) ներկայացված է ՍԵՃՆԵԱԿ, իսկ մի ձեռագրում (№ 1488) սխալ գրությամբ՝ ԱՆԾՆԵԱԿ ձևով, որ տեղ է գտել նաև արժանահիշատակ Լեզվաբան Աշոտ Աբրահամյանի կատարած Թարգմանության մեջ (տե՛ս Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն, Երևան, 1986, էջ 401):

28 Ժն դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն Գ, էջ 116:

29 Նույն տեղում, էջ 191:

30 Մ. Հասրաթյան. նշվ. աշխ., էջ 156:

31 Այդ մասին տե՛ս, օրինակ Բ. և Ն. Հակոբյան և ուրիշ. Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան. հ. 2, Երևան, 1988, էջ 761:

Այսպիսով, մինչև այսօր էլ հիմնավորապես ապացուցված չէ, թե խոզնավար գյուղանունը շտույգ ինչի՞ց է ծագում և իրապես ի՞նչ է նշանակում: Մինչդեռ պետք է ասել, որ ոչ պակաս կարևորություն ունեցող այդ խնդրի վրա որոշակի լույս են սփռում գյուղանվան՝ նույնպես վաղ շրջանի այլ հրավոր աղբյուրներում հանդիպող ձևերը:

Այսպես՝ առաջին. Մելիք Հակաղի հրեք որդիների կողմից ավանդված մի ընդարձակ արձանագրության երեսի կողմին խոզնավար գյուղը հիշատակվում է ԽՋՆՎՐ համառոտագրությամբ:

Երկրորդ. XVII դարի մի հիշատակարանում ուղղակի ասվում է. «...յան-ձն առի և բազում աշխատութեամբ և տառապանք գծագրեցի զուս մեղսամած մատամբ իմով, ի յաստածաբնակ և յանառիկ դղեակս Քաշքաղ, ի է(ե)օղն խզնավար, ընդ հովանեաւ Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, ի հայրապետութեան, տեառն Փիլիպպոսի հայոց վերագիտողի, ի թվականութեանս Հայոց ՌՃԱ (1652)»:

Երրորդ. Տաթևի վանքի նոր հարկացուցակում խոզնավար-ը Քաշքաղուց գավառի գյուղերի շարքում ներկայացվում է մի այլ՝ խոզնավար ձևով, նշենք նաև, որ Ղ. Ալիշանն էլ գյուղանունը գործածել է խոզնավար, խոզնավար, խոզնավար ձևերով, ասելով, որինակ՝ «...բայց վերագոյն և արևմտագոյն և մերձագոյն ի Միծեռնովանս է խոզնավար կամ խոզնավար րստ ալմալն (այս ընդգծումն իմն է—Ա. Մ.), գիւղ, որ թէպէտ ոչ է յիշեալ ի հին Ջուցակին, այլ ի յետինսն նշանակի իբր վիճակեալ նոթոռաբերդի»³²:

Այսպիսով, խոզնավար գյուղանունը վաղ շրջանի գրավոր աղբյուրներում ներկայացվում է խոզնավար, խոզնավար, խոզնավար, խոզնավար ձևերով, որոնք մի կողմից եթե հաստատում են, որ այն նախապես իրոք խոզնավար է եղել, ապա մյուս կողմից էլ ցույց են տալիս, որ դա պարզապես Կորիսի բարբառին հատուկ հնչյունական փոփոխություններ է կրել (հմմտ. մանակ—մահակաթակ—մըհկաթակ, խաղալ—խաղալաղալ—խրղաղալ||հըղղաղալ, խոռոռու—խրտուրու և այլն) և դարձել ի վերջո խոզնավար:

Իրովին արդարացիելով հնչյունաբանորեն՝ խոզնավար նախաձևը ինքնին վկայում է. որ դա իրոք «խողան» (սկզբնական թողած կամ հասկերի ցողուններով պատած արտ) + «վար» («վարած տեղ») բառ-բաղադրիչներից կազմված իսկական բարդություն է, ըստ որի էլ գյուղանունը նախապես «Անմշակ արտի վարատեղ կամ վարելատեղ» է նշանակել:

ТОПОНИМИЧЕСКИЕ ИСТОЛКОВАНИЯ

Доктор филол. наук А. С. МАРКЛЯН

Резюме

Анализ происхождения топонимов (названия сел) *Արավուս* (Аравус), *Խնձորեսկ* (Хндзореск), *Խոզնավար* (Хозनावар) Горисского района Республики Армения, основанный как на древних письменных, так и на ряде языковых фактов, показывает:

1. название села *Արավուս* восходит к первоначальной форме винительного падежа *Արևիս* топонима *Արևիք* (Аревик), обозначающего солнечное место; 2. название села *Խնձորեսկ* восходит к первоначальной форме *Խնձորեակ*, которая состоит из компонентов *խնձորի* (—*խնձոր*—ի «яблоня») + суффикс-*ակ* и в соответствии со значениями их обозначала место яблонь; 3. название села *Խոզնավար* имело первоначальную форму *խոզանավար*, которая состоит из компонситов «*խոզան*» («стерня») и «*վար*» («пахота», «вспаханка») и обозначала место пахоты, стерни.

³² Հայերեն ձևագրերի հիշատակարաններ, Ժէ դար, հ. Գ, էջ 506:

³³ Ղ. Ալիշան. նշվ. աշխ., էջ 268: